



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 05/23**

18.09.2023թ.

ք. Երևան

Ռուբեն Սերյոժայի Գրիգորյանի և Գոհար Աշոտի Գալստյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի դրույթները ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի առնչությամբ

1. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԵՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

01.08.2002թ ՀՀ կառավարությունն ընդունել է «Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» № 1151-Ն որոշումը, որով սույն գործով դիմողներ Ռուբեն Գրիգորյանի և Գոհար Գալստյանի բնակարանն ընդգրկվել է պետական կարիքների համար «իրացման գոտում»:

Խնդրո առարկա բնակարանը սեփականաշնորհված չի եղել:

15.05.2003թ ՀՀ կառավարությունն ընդունել է «Մինչև «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եվ ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը հաշվառումից դուրս մնացած ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների, ինքնակամ զբաղեցված կամ ՀՀ օրենսդրության խախտումներով օտարված (տրամադրված, ձեռք բերված) պետական սեփականության հողամասերի վերաբերյալ դիմումների և հայտերի քննարկման կարգը հաստատելու մասին» № 1748-Ն որոշումը, որի 3-րդ կետի համաձայն դիմողների բնակարանը ենթակա չի եղել օրինականացման:

Ռուբեն Գրիգորյանը 29.10.2004թ դիմել է Կադաստրի կոմիտե բնակարանը օրինականացնելու պահանջով, որը 01.11.2004թ մերժվել է այն պատճառաբանությամբ, որ «ինքնակամ կառույցը գտնվում է պետության կարիքների համար վերցվող իրացման գոտում»:

Դիմողները 15.06.2005թ. վտարվել են բնակարանից:

Դիմողները բնակարանի համար փոխհատուցում չեն ստացել, այն պատճառաբանությամբ, որ բնակարանը օրինականացված չէ և վերջիններս չունեն դրա նկատմամբ սեփականության իրավունք: Նրանց վճարվել է բացառապես հաշվառված անձ լինելու համար նախատեսված միանվագ գումարը, սակայն իրենց գույքի դիմաց փոխհատուցում չի տրամադրվել:

Դիմողների անունից 15.10.2019թ «Պետության կարիքների համար օտարված գույքի դիմաց նախնական համարժեք փոխհատուցում տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին» հայցադիմում է ներկայացվել Երևան քաղաքի

ընդհանուր իրավասության դատարան:

25.03.2021թ կառավարության ներկայացուցիչը ներկայացրել է «Հայցային վաղեմություն կիրառելու մասին» միջնորդություն:

03.03.2022թ Առաջին ատյանի դատարանը կայացրել է վճիռ, որով բավարարել է Կառավարության 25.03.2021թ միջնորդությունը և մերժել դիմողների հայցը:

11.07.2022թ դիմողները ներկայացրել են վերաքննիչ բողոք:

05.12.2022թ Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել, որով մերժել է վերաքննիչ բողոքը:

08.01.2023թ դիմողները վճռաբեկ բողոք են ներկայացրել:

22.03.2023թ Վճռաբեկ դատարանը կայացրել է «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում:

Սույն գործի շրջանակներում դատարանների մոտեցումը եղել է այն, որ հայցվորների իրավունքի ենթադրյալ խախտումները իրականացվել են ոչ թե սեփականության իրավունքի իրացման ընթացքում առանց նրանց տիրապետման իրավունքից զրկելու, այլ նրանց սեփականության իրավունքի ճանաչման պահանջի մերժման և վտարումից հետո փոխհատուցում չտրամադրելուց հետո:

Այսինքն ըստ եռթյան խոսքը վիճակացիոն հայցի մասին է, որի պարագայում էլ կիրառելի է հայցային վաղեմությունը:

Դատարանները եզրահանգել են, որ սեփականատիրոջ մոտ փոխհատուցման իրավունքը ծագել է գույքի օտարման պահին: Հայցվորները չեն վիճարկել գույքի օտարումը, սակայն գրեթե 15 տարի անց հայցադիմում են ներկայացրել դատարան օտարված գույքի դիմաց փոխհատուցում ստանալու պահանջով:

Հետևաբար, հայցվորների մոտ ենթադրյալ խախտված իրավունքների պաշտպանության իրականացման իրավունքը ծագել է 17.06.2005 թվականից, երբ արդեն իմացել են, որ գույքը ենթակա է օտարման, և հայցային վաղեմության ժամկետները ավարտվել են 18.06.2008 թվականին, իսկ սույն հայցադիմումը դատարան մուտք է եղել 17.10.2019 թվականին:...»:

2. ԴԻՄՈՒՄՈՎ ՎԻՃԱԿԿՈՂ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴՐՈՒՅԹԸ

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմությունը չի տարածվում՝

1) անձնական ոչ գույքային իրավունքների և այլ ոչ նյութական բարիքների պաշտպանությանն ուղղված պահանջների վրա, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

2) ավանդները վերադարձնելու վերաբերյալ ավանդատուների կողմից բանկին ներկայացվող պահանջների վրա.

3) քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու պահանջների վրա: Սակայն նման վնասի հատուցման իրավունքի ծագման պահից երեք տարի անցնելուց հետո ներկայացված պահանջներն անցյալ ժամանակի համար բավարարվում են ոչ ավելի, քան հայցի ներկայացմանը նախորդած երեք տարիների համար.

4) սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի ամեն մի խախտման վերացման պահանջների վրա, թեկուզև այդ խախտումները կապված չեն եղել տիրապետումից զրկելու հետ (հոդված 277).

5) սեփականատիրոջ՝ պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձանց ակտը, որով խախտվել են

սեփականատիրոջ գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքները, անվավեր ճանաչելու մասին պահանջների վրա:

6) օրենքով սահմանված այլ պահանջների վրա:

Դիմողների պնդմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի դրույթը (իրավական բացը) չի նախատեսում «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում սեփականության դիմաց նախնական և համարժեք փոխհատուցում ստանալու հայցապահանջների նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու բացառություն, որպիսի պարագայում Առաջին ատյանի դատարանը 03.03.2022թ վճռով և Վերաքննիչ դատարանը 05.12.2022թ որոշմամբ հնարավորություն չեն ունեցել ապահովելու դիմողների դատարանի մատչելիության իրավունքը և սեփականության դիմաց նախնական և համարժեք փոխհատուցում ստանալու շուրջ վեճի ըստ էության քննությունը դատարանում:

3. ՀՀ ՓԱՏՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Սույն գործով դիմողները «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում սեփականության դիմաց նախնական և համարժեք փոխհատուցում ստանալու հայցապահանջների նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու բացառության բացակայությունը դիտարկել են օրենսդրական բացի լույսի ներքո և պնդել, որ այդ պայմաններում առկա է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության խնդիր:

Հայցային վաղեմության հետ կապված հարցերը քննության առարկա են դարձել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում, ինչի առնչությամբ վերջինիս արտահայտել է այն դիրքորոշումը, որ դատարան դիմելու իրավունքը բացարձակ չէ: Դատարանը սպառնիչ և պատճառաբանված հիմքերով բողոքը կարող է մերժել (*Ali Riza*-ն ընդդեմ Շվեյցարիայի, 2021, §§94-96), և այս առումով գործում է ենթադրվող սահմանափակումների շրջանակ (*Stanev*-ն ընդդեմ Բուլղարիայի [ՄԴ], 2012, § 230, *Zubac*-ն ընդդեմ Խորվաթիայի [ՄԴ], 2018, §78, *Golder*-ն ընդդեմ Միացյալ Թագավորության, 1975, § 38): Այն կիրառվում է հատկապես այն ժամանակ, երբ քննարկվում են բողոքի ընդունելիության պայմանները, քանի որ իր բնույթով այն ենթադրում է կարգավորում պետության կողմից, որն ունի այդ առումով թույլատրելի հայեցողության որոշակի շրջանակ (*Zubac*-ն ընդդեմ Խորվաթիայի [ՄԴ], 2018, §§ 107-109, *Luordo*-ն ընդդեմ Իտալիայի, 2003, §85):

Ուսումնասիրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի դրույթները՝ կարելի է գալ այն հետևության, որ պահանջները, որոնց վրա հայցային վաղեմություն չեն կիրառվում, խիստ սահմանափակ են: Դրանց շարքում գույքային բնույթի պահանջները էլ ավելի սակավաթիվ են, որոնք օրենսգրքում սահմանվել են՝ ելնելով դրանց շահառուների հարաբերականորեն լայն շրջանակից, դրանց սոցիալական ուղղվածությունից և այլ չափանիշներից: Ինչ վերաբերում է «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում սեփականության դիմաց նախնական և համարժեք փոխհատուցում ստանալու հայցապահանջների նկատմամբ հայցային վաղեմություն չկիրառելու բացառությանը և դրա բացակայության հիմքով օրենսգրքի վերոնշյալ հոդվածի ՀՀ սահմանադրության ենթադրյալ անհամապատասխանությանը, ապա հարկ

Ե նշել, որ Բարձր դատարան ներկայացված դիմումի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանում չեն ներկայացվել բավարար իրավական հիմնավորումներ խնդրո առարկա հողվածի կարգավորումներում «Ենթադրյալ իրավական բացի» մասով:

ՀՀ սահմանադրական դատարանը ՍԴՈ-864, ՍԴՈ-914, ՍԴՈ-922, ՍԴՈ-1020, ՍԴՈ-1056, ՍԴՈ-1143, ՍԴՈ-1476 որոշումներում անդրադարձել է օրենսդրական բացի խնդրին, որոնցում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

«1) օրենսդրական բացը Սահմանադրական դատարանի քննության առարկա կարող է դառնալ այն ժամանակ, երբ այն իրավակարգավորման թերությունն է, այլ ոչ թե իրավաստեղծ մարմնի, տվյալ դեպքում՝ օրենսդրի կամքը՝ ձեռնպահ մնալու որպես օրենսդրական բաց ընկալվող իրավական կարգավորումից.

2) ցանկացած թերի օրենսդրական կարգավորում չէ, որը որպես օրենսդրական բաց կարող է Սահմանադրական դատարանի քննության առարկա դառնալ, այլ միայն այնպիսի օրենսդրական բացը, որը հնարավոր չէ հաղթահարել այլ վերաբերելի իրավակարգավորումները մեկնաբանելու և կիրառելու միջոցով.

3) օրենսդրական բացը պետք է հանգեցրած լինի հակասական իրավակիրառ պրակտիկայի, որը հնարավոր չէ հաղթահարել կամ որը փաստացի չի հաղթահարվել սովորական դատարանների կողմից.

4) օրենսդրական բաց առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքությունն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը.

5) այն դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ բոլոր դեպքերում, երբ հարաբերության օրենսդրական կարգավորման բացակայությունն առերևույթ խնդրահարույց է, սակայն գործի քննության ընթացքում բացահայտվում է, որ կարգավորման բացակայությունը ոչ թե թերություն է, այլ օրենսդրի կամահայտնությունը, անհրաժեշտ է իրավական գնահատական տալ օրենսդրի նման մոտեցումներին, թե որքանով են դրանք իրավաչափ: Սահմանադրական դատարանը գտել է, որ հասարակական հարաբերության իրավական կարգավորման բացակայությունը չի կարող դիտարկվել իբրև օրենսդրական բաց, եթե այն բավարարում է իրավաչափության պարտադիր չափանիշներին:

Վերոշարադրյալի լույսի ներքո նշենք, որ դիմումատուները որևէ կերպ զրկված չեն եղել «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում իրենց գույքի օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցում ստանալու պահանջով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված ժամկետներում դատարան դիմելու իրավունքից: Դիմումատուները այդ ժամանակահատվածում որևէ քայլ չեն ձեռնարկել իրենց իրավունքների ենթադրյալ խախտումների համար և դա արել են միայն հայցային վաղեմության ժամկետը լրանալուց շուրջ 15 տարի անց:

Վերլուծելով սույն գործի փաստական հանգամանքները և դրանք համադրելով դիմումում ներկայացված դիրքորոշումների և մտահոգությունների հետ՝ կարող ենք գալ այն հետևություն, որ ներկայացված դիմումով չի բարձրացվել օրենսդրական բացի խնդիր, դրանում օրենսդրական բացը բացակայում է: Ավելին, դիմողների կողմից ներկայացված փաստարկները, կարծես չեն գերազանցում խնդիրը Բարձր դատարանի առջև քննության առարկա դարձնելու հիմնավորվածության շեմը: Բարձրացված հարցը ունի զուտ սուբյեկտիվ (մասնավոր) բնույթ և դրանում հանրային շահի հիմնավորման իրավական բազան բավական թույլ է:

Ավելին, դիմողների կողմից առաջ քաշված օրենսդրական բացի հարցը անհրաժեշտ է դիտարկել նաև հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման, ինչպես նաև դատական ակտերի վերջնական լինելու *res judicata* սկզբունքի համատեքստում, ինչը խիստ խոցելի է դարձնում դիմումում բարձրացված խնդրի իրավական հիմնավորվածությունը և կարող է իրավական անվտանգության տեսանկյունից լուրջ խնդիրներ առաջացնել:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ **Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի կարգավորումները ՀՀ սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց չեն:**

Համակարգող՝



Ա. Ասատրյան